ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԸՍՏ ԱՄՆ-Ի ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ Վ. ՖԻԼԻՊՍԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (1919 թ. սեպտեմբեր)

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա. Վ.

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ու մասնավորապես Օսմանյան կայսրության պարտությունը, թվում էր՝ պետք է վերջ դնեին հայ ժողովրդի տառապանքներին: Նրա ակնկալիքները կապված էին անկախություն ու պետականություն հաստատելու պայքարում ոչ միայն մեծ տերությունների՝ դեռևս պատերազմի ընթացքում հայերին օգնելու խոստումների, այլև խաղաղ պայմաններում ստեղծված հնարավորությունների հետ:

Այդուհանդերձ, խաղաղությունը հայ ժողովրդի համար հարաբերական էր, ինչն էլ շատ անգամ բազմացնում ու բարդացնում էր առկա դժվարությունները: Աննկարագրելի չափերի հասած սովն ու հիվանդությունները, տնտեսական քայքայումը հնարավոր էր կարճ ժամանակում հաղթահարել, եթե չպահպանվեր ֆիզիկական բնաջնջման վտանգը՝ այժմ արդեն թուրք-ադրբեջանական դաշինքի ձևով: Թարմացվող նոր ուժը, ի դեմս այս դաշինքի, հայ ժողովրդի վերջնական կործանման գործում հերթի էր դրել Արևելյան Հայաստանը: 1919 թ. իր դերն էր խաղում նաև բոլշևիկյան սպառնալիքը:

Ստեղծված իրավիճակում հաղթող տերությունների՝ Թուրքիայի հետ պայմանագրի ձգձգումը, ուստի և Հայկական հարցի լուծումը, պայմանավորված էին գործընթացի մեջ ԱՄՆ-ի ընդգրկմամբ: Ամերիկյան կառավարությունը 1919 թ. փետրվարին հայտարարել էր Հայ-կական խնդրի լուծմանը մասնակցելու ցանկության մասին: ԱՄՆ-ի նախագահը, տպավորություն ստեղծելով, թե Ամերիկան կարող է ստանձնել Հայաստանի ենթադրվող մանդատը, խոստացավ հստակ պատասխան տալ ընթացիկ տարվա օգոստոսին կամ սեպտեմբերին[1]*:*

Այսպիսով, հարցի քննարկումը հետաձգվեց: Մի քանի ամիսների սպասողական վիճակը ծանր անդրադարձավ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության վրա: Թուրքական վտանգը՝ ի դեմս քեմալական ազգայնական շարժման, դաշնակիցներին ստիպեց որոշում կայացնել Հայաստան զենք ու զինամթերք, ինչպես նաև զորք ուղարկելու վերաբերյալ[2]*: Այդ մասին 1919 թ. սեպտեմբերի 5-ին դաշնակիցները տեղեկացնում են Միացյալ Նահանգների պետքարտուղար Ռ. Լանսինգին: Սեպտեմբերի 8-ին ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերու-*

---

[1] *The Case of Armenia and United States, N.-Y., 1926, p. 9;* **Ադոնց Ն.,** *Հայկական հարց, Ե., 1996, էջ 162:*

[2] **Ադոնց Ն.,** *նշվ. աշխ., էջ 163:*

թյունների հանձնաժողովի նախագահ, Մասաչուսեթսը ներկայացնող սենատոր Հ. Լոջը և Միսիսիպի նահանգի սենատոր Ջ. Վիլյամսը սենատում հանդես են գալիս առաջարկությամբ, որը ձևակերպվում է որպես բանաձև: Այն ԱՄՆ-ի կառավարությանը լիազորում էր ստանձնել հոգուտ հայերի դաշնակիցների ծրագիրը և օգտագործել ամերիկյան զորքերը Հայաստանում[3]:

Այդ բանաձևը համալրվում է սենատոր Լոջի առաջադրած (10. XII.1918 թ.) բանաձևով և ներկայացվում Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի լսումներին: Ենթահանձնաժողովի նախագահն էր Ու. Հարդինգը Օհայոյից, անդամները՝ Ջ. Վիլյամսն ու Ինդիանայից հանրապետական սենատոր Հ. Նյուն: Ենթահանձնաժողովի լսումների ու քննարկումների ընթացքում(27.IX.1919 թ.-10.X.1919 թ.)ելույթ ունեցավ նաև պետքարտուղարի օգնական Վ. Ֆիլիպսը, որը ներկայացնում էր պետդեպարտամենտի տեսակետը այդ թեմայի շուրջ, ինչպես նաև տեղեկություններ Հայաստանի իրավիճակի վերաբերյալ:

Վ. Ֆիլիպսը իր ելույթում նշեց, որ ամերիկացիներին տվյալ պահին մտահոգում է երկու հարց. ի՞նչ պետք է արվեր (եթե ընդհանրապես որևէ բան նախատեսվում էր անել) Հայաստանում կանխելու հետագա ջարդերը, և ի՞նչ էր հնարավոր անել այնտեղ սովը հաղթահարելու համար:Անդրկովկասից բրիտանացիների հեռանալուց հետո իրավիճակը բարդացել էր. մթերքի ողջ առաքումը վտանգվում էր, քանզի փոխադրամիջոցները ենթարկվում էին հայերի հանդեպ թշնամաբար տրամադրված տարբեր ժողովուրդների հարձակումներին: Եթե օգնությունն ապահով տեղ հասներ, ապա կարելի էր կանխել սպառնացող սովը, և հնարավոր կլիներ նաև թուրքական վտանգի դեմն առնել՝ անկախ Ռուսահայաստանը գրավելու և ջարդերի կազմակերպման առումով: Ըստ Ֆիլիպսի՝ փոխադրումները հսկելու դեպքում կապահովվեին ոչ միայն սննդի մատակարարումները, այլև կհեշտացվեին հայկական զորաբաժանումների տեղաշարժերը: Նա նշում էր, որ համատարած սովի ու չքավորության պայմաններում հայերն ինքնուրույն չէին կարող վերադառնալ իրենց հողերը[4]: Նրանք ամբողջովին թալանված էին: Երկրում չէր գործում որևէ ձեռնարկություն: Եթե հնարավոր լիներ ամերիկյան մթերքը տեղ հասցնել և հայ ժողովրդին ապահովել նաև գյուղատնտեսական սարքավորումներով ու գործիքներով, ապա Արևմտյան Հայաստանից գաղթածները կարող էին վերադառնալ իրենց բնակավայրերը: Կարևոր էր նաև երկաթուղին զենքով պաշտպանելը. այդ պարագայում հայերը կկարողանային իրենց մասին հոգ տանել:

---

[3] *Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R. 106; p. 3:* **Կիրակոսյան Ջ.,** *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 566:*

[4] *Maintenance of Peace in Armenia..., p. 35.*

Ֆիլիպսը ենթահանձնաժողովին տեղեկացրեց, որ զինված ճանապարհով փոխադրումներն իրականացնելու նպատակով վերջերս Հայաստան էր ուղարկվել գեներալ Ջ. Հարբորդը, որի դիտարկումները հնարավորություն կտային եզրակացնել, թե ինչ ռազմական ուժ էր անհրաժեշտ այնտեղ խաղաղություն ապահովելու համար: Հարբորդի առաքելությունը մտավ գործողության մեջ. նա շրջում էր ավտոմեքենայով Թուրքիայի ողջ տարածքով և դեռևս որևէ զեկուցում չէր ուղարկել: Նշված ուղղությամբ գործելու համար, Ֆիլիպսը տրամաբանում էր, որ ռազմական ուժի քանակի վերաբերյալ հաշվարկ-ները կարող էին չափազանց տատանվել՝ 2-3000-ից մինչև 50.000 կամ 60.000 մարդ:

Ըստ Ֆիլիպսի տեղեկությունների, 1915 թ. թուրքերի կազմակեր-պած տեղահանությունների և կոտորածների ընթացքում մոտ 350.000 թուրքահպատակ հայ տեղափոխվել էր Անդրկովկաս՝ թողնելով ողջ ունեցվածքը: Մոտ 160.000 հայ կռվում էր Ռուսաստանի կողմից, այլ կերպ ասած՝ պատերազմում համագործակցում էր Անտանտի երկրների հետ՝ ընդդեմ Թուրքիայի, Գերմանիայի և Ավստրիայի: Համաձայնելով սենատոր Վիլյամսի ճշգրտմանն առ այն, որ այդ 160.000 հայերը ռուսահպատակ էին, Ֆիլիպսը նշում է, որ բազմահազար փախստականները չէին կարողանում աշխատանք գտնել Ռուսահայաստանում: Եվ քանի որ աշխատունակ հայ տղամարդկանց մեծ մասը ծառայում էր բանակում, պակասել էին արտադրողները, ավելացել սպառողները: Ուստի նպաստավոր պայմաններ էին ստեղծվել համատարած սովի համար: Ռուսական հեղափոխությունից հետո ռուսական բանակը կազմալուծվեց, 1918-ին թուրքերը գրավեցին Ռուսահայաստանի մի մասը: Նրանք ավերեցին ամեն ինչ և թալանեցին ամեն բան, ինչ ձեռքներն ընկավ (գյուղատնտեսական գործիքներ, անասուններ և այլն): Այդ ամենի հետևանքով մահացությունը հսկայական չափերի հասավ:

Որոշ ժամանակ անց, ինչպես նշում է Ֆիլիպսը, «եկավ Ամերիկյան սննդի վարչությունը (the American Food Administration)[5], որը, համագործակցելով Հայաստանի և Սիրիայի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (the American Committee for Armenian and Syrian Relief) հետ, կատարեց թեև փոքր, բայց շատ արդյունավետ աշխատանք և կարողացավ ապահովել մեծ քանակությամբ մատակարարումներ՝ փրկելով հազարավոր կյանքեր»[6]:

Սակայն փրկվածները չէին կարող վերադառնալ Թուրքահայաստան, քանի որ իրավիճակն այնտեղ անկայուն էր: Վերջիններիս տեղափոխվելու միակ հնարավորությունն առաջին հերթին կապված էր նրանց՝ մթերքով ապահովելու խնդրի լուծման հետ: Փաստացի, ինչպես ձևակերպեց սենատոր Վիլյամսը, նշված շրջանում հայերի կործանման պատճառներն էին սովը և ջարդերը: Նույն կարծի-

[5] Ֆիլիպսը, հավանաբար, նկատի ուներ Ամերիկյան նպաստամատույց վարչությունը (American Relief Administration):

[6] Maintenance of Peace in Armenia..., p. 35.

քին էր Ֆիլիպսը. նա փաստեց, որ հայերն իսկապես ենթարկվում էին հարձակումների ոչ միայն քրդերի, թուրքերի և թաթարների կողմից, այլև՝ վրացիների: Նա նշում է, որ մթերքի հետ կապված խնդիրը կարող է լուծվել միայն երկաթուղով, որը սկսվում էր Բաթումի նավահանգստից և հասնում մինչև Երևան: Դա Ռուսահայաստանի միակ երկաթուղին էր: Չնայած որ տարածությունն այդ երկու քաղաքների միջև ընդամենը 200 մղոն էր, սակայն ճանապարհը ուղիղ չէր և անցնում էր նաև Թիֆլիսով: Ճանապարհի որոշ հատվածներ հսկում էին բրիտանացիները, սակայն նշված օրերին նրանք հեռանում էին, ինչը նշանակում էր, որ ամբողջ երկաթգծի համակարգը ենթակա էր քայքայման:

Ըստ Ֆիլիպսի, նրանց հեռանալուց հետո առաջանում է մահմեդականների կողմից Հայաստանը զավթելու հավանականությունը: Նա նշում է. «Մենք տեղեկացված ենք, որ համաձայնեցված գործողություններ կան Թուրքական ազգային կուսակցության (Turkish National Party) և Ադրբեջանի թաթարական կառավարության (Azerbaijan Tatar Government) միջև. մեծ թվով թուրք սպաներ են գործում այդ տարածաշրջանում, որոնք կազմակերպում են մահմեդական ուժերը: Ադրբեջանի թաթարական կառավարությունը ֆինանսավորում և հովանավորում է այդ շարժումը: Նրանք ցանկանում են, հնարավորության դեպքում, ձերբազատվել բոլոր քրիստոնյաներից և, հավանաբար, կարծում են, որ այժմ հարմար պահ է դա իրականացնելու համար»[7]:

Ֆիլիպսի պարզաբանմամբ, հայերի նկատմամբ հակակրանքը միայն կրոնով չէր պայմանավորված: Այն նաև քաղաքական բովանդակություն ուներ: Թուրքերը ձգտում էին իրենց քաղաքական իշխանությունը հաստատել Թուրքիային սահմանակից բոլոր շրջաններում, ներառյալ Պարսկաստանն ու Հնդկաստանին հարակից երկրները: Նրանք մտադրված էին դա իրականացնել պանթուրանիզմի միջոցով, որի նպատակն էր Եվրոպայի և հատկապես Ասիայի թուրք բնակչությունը միավորել իրենց կառավարման ներքո: Բացի այդ, փորձում էին կազմակերպել պանիսլամիստական շարժումը, որին թուրքերը, կրոնական արտահայտություն էին տվել՝ իրար հակադրելով մահմեդականներին և քրիստոնյաներին: Պանիսլամիզմի միջոցով նրանք ձգտում էին նաև միավորել ամբողջ աշխարհի մահմեդականներին իրենց կրոնական և քաղաքական ղեկավարության ներքո: Ըստ Ֆիլիպսի՝ նշված երկու շարժումներն էլ միասին ակտիվորեն գործում էին պատերազմի սկզբին, և գերմանացիները ջանում էին օգտագործել այդ երկու զորեղ շարժումներն Անտանտի դաշնակիցների դեմ իրենց հետագա ծրագրերն իրականացնելու համար: Եթե պանիսլամիստական շարժումը պատերազմից հետո կարելի էր համարել տապալված, ապա պանթուրանականը, այն է՝ թուրքերի քաղաքական նկրտումները, դեռևս զբաղեցնում էին վերջիններիս մտքերը:

[7] Նույն տեղում, էջ 36:

Այլ կերպ ասած՝ կային քաղաքական ծրագրեր, որոնք աջակցություն էին գտնում կրոնական շարժման կողմից, և շատ դժվար էր դրանք առանձնացնել:

Ֆիլիպսը մեկնաբանությամբ, այդ ծրագրերը ենթադրում էին թուրքերի ճանապարհին գտնվող քրիստոնյա ժողովուրդների ջարդ ու բնաջնջում, և դա հաստատվում է պատմական իրողությամբ. այդ կերպ թուրքերը ձերբազատվում էին բոլոր խոչընդոտներից, որ կարող էին խանգարել նրանց զավթողական ծրագրերին: Ըստ պետքարտուղարի օգնականի, հայերն հայտնվել էին պանթուրանական շարժման թիրախում, քանի որ քրիստոնյա էին: Դրան նպաստում էին նաև այլ հանգամանքներ՝ ազգությունը, քաղաքակրթության բարձր աստիճանը, հայոց երկրի աշխարհագրական դիրքը (քրիստոնյա հայերը, փաստորեն, արևմտյան Թուրքիայի և Կովկասի ու Կենտրոնական Ասիայի թուրքերի արանքում էին): Թուրքերը ջանում էին լուծել իրենց խնդիրը և՛ սովի, և՛ ջարդերի միջոցով:

Պետքարտուղարի օգնականի համոզիչ բացատրությունները ենթահանձնաժողովին հանգեցրին այն եզրակացության, որ հենց այդ ընթացքում, երբ իրենց հանձնաժողովը քննարկում էր խնդրո առարկա բանաձևը, հնարավոր էին համատարած, զանգվածային ջարդեր, եթե բրիտանական ուժերը դուրս գային տարածաշրջանից: Ինչպես տրամաբանում էր սենատոր Վիլյամսը, թուրքերը կարող էին կոտորել ոչ միայն հայերին, այլև երկրում գտնվող բրիտանացիներին ու ամերիկացիներին:

Նիստի ընթացքում Ֆիլիպսը հրապարակեց նաև մի հեռագիր, որն ուղարկվել էր Փարիզից՝ Ամերիկյան առաքելության կողմից 1919 թ. սեպտեմբերի 25-ին: Հեռագիրն ամփոփում էր ամերիկացի գնդապետ Հասքելից ստացված տեղեկությունները: Վերջինս դաշնակից և համագործակցող երկրների կառավարությունների անունից ներկայացնելով ողջ գերագույն խորհուրդը՝ մոտ երկու ամիս առաջ ուղարկվել էր Հայաստան, իրականացնելու օգնությանն առնչվող աշխատանքները: Գնդապետ Հասքելը տեղեկացնում էր, որ իրավիճակը Հայաստանում ուղղակի սարսափելի է: Եվ եթե օգնությունը ժամանակին հասներ, կարելի էր կանխել հարձակումները, մանավանդ եթե իրեն զորք տրամադրվեր, հնարավոր կլիներ Ռուսահայաստանում փոխել իրադրությունը՝ անգամ ամերիկյան հետևակային մեկ բրիգադին համարժեք ուժով: Հասքելը նաև հայտնում էր, որ թաթարները հարձակումներ էին գործում և՛ հարավից, և՛ արևելքից: Միևնույն ժամանակ ապստամբել էին Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող թաթարները: Նրա կարծիքով, ամերիկացիների դաշնակից հայերի ճակատագիրը կարող էր որոշվել անգամ մեկ զորագնդի միջոցով: «Մինչ զորախմբերը կշտապեն հասնել, հայերը ցանկացած պահի կարող են բնաջնջվել»[8]:

Ֆիլիպսը հանձնաժողովին ներկայացրեց նաև Կոստանդնուպոլսից ուղարկված մի նամակ՝ Պարսկաստանի օգնության ամերիկյան հանձնաժողովի անդամ

---

[8] *Նույն տեղում:*

Ֆ. Սմիթի զեկուցումը: Վերջինս եղել էր Երևանում, Ուրմիայում, Նախիջևանում և Թավրիզում, ապա սեպտեմբերի 19-ին ժամանել էր Կ. Պոլիս: Նա տեղեկացնում էր, որ հուլիսի 20-ին թաթարները Նախիջևանում ճակատամարտ էին սկսել հայերի դեմ: Երեքօրյա մարտերից հետո նրանք դուրս էին քշել բրիտանացիներին ամերիկյան օգնության աշխատակիցների հետ մեկտեղ և սկսել էին հայ կանանց, երեխաների և տղամարդկանց ջարդը: Տարբեր հաշվարկներով, զոհերի թիվը տատանվում էր 6.000-12.000-ի միջև: Թ. Սմիթը գրում էր, որ բրիտանացիների կյանքն այլևս ապահովված չէր, քանի որ այնտեղ չկային բրիտանական զորքեր: Նա գտնում էր նաև, որ ամերիկացիները նույնպես վտանգի մեջ են:

Ամերիկացիները Սմիթին պատմել էին, որ Ջուլֆայի կամրջով Պարսկաստան անցնելիս ականատես էին եղել զարհուրելի տեսարանի՝ ամբողջ գետը լցված է եղել գլխատված ու այլանդակված մարմիններով: Ռուսաստան վերադառնալու ճանապարհին Սմիթն ինքն էր տեսել գետի երկայնքով, ափերին ընկած մարդկային խոշտանգված մարմիններ:

Սմիթը գրում էր, որ թուրքական զորքերի Արևելյան ճակատի նախկին հրամանատար Հալիլ բեյն արդեն թաթարների առաջնորդն էր և Բայազետից՝ Մակուի վրայով բերում էր օսմանցի թուրքերին՝ Երևանը գրոհելու համար: Բացահայտ էր, որ ոչինչ, բացի դաշնակիցների ուժերից, չէր կարող կանգնեցնել քաղաքի անկումը: Թավրիզն ու Պարսկաստանի հյուսիսարևմտյան մասն այդ իրադարձությունների ազդեցության ոլորտում էին: Ոչ մի ամերիկացի պաշտպանված չէր մայիսին և հուլիսին Ուրմիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերից հետո: Նշվում էր նաև, որ 5.000 ասորի փախստականներ այժմ հազիվ գոյատևում են ամերիկացիներից ստացած օգնության շնորհիվ: Եթե թաթարները գրավեին Երևանը, ապա, անշուշտ, հակաքրիստոնեական և այլ պետությունների դեմ քարոզչությունը նոր թափով կսկսվեր, և Թավրիզում արևելյան երկու քրիստոնյա ժողովուրդները, ինչպես և ամերիկացիները վտանգի մեջ կհայտնվեին:

Ֆիլիպսը ներկայացրեց նաև Ջ. Ջերարդի՝ Նյու-Յորքից պետքարտուղարին ուղարկած հեռագիրը (19.IX.1919): Նա գրում էր, որ Փարիզից գաղտնի հեռագիր էր ստացել Հայաստանի Հանրապետության ներկայացուցչից, որտեղ ասված էր. «Ադրբեջանը, թուրք սպաների ղեկավարության ներքո, պատրաստվում է պատերազմի Հայաստանի դեմ: Վրաստանն ու Ադրբեջանը բացահայտ դաշինք են կնքել Դենիկինին հարվածելու, սակայն իրականում՝ Հայաստանին հարվածելու համար: Բրիտանացիներն արդեն հեռացել են Հայաստանից, իսկ Հասքելը ժամանել է առանց զինվորների: Բացարձակապես չի բավարարում զինամթերքը: Վրացիներն արգելում են, բացի ալյուրից, բոլոր տեսակի ապրանքների տեղափոխումը Վրաստանի վրայով: Բոլորովին դրամ չունենալով՝ բնակչությունն ուժասպառ է եղել, ժողովուրդը սովի է մատնված ամենուր, Երևանի փողոցներում ամեն օր մահացած են գտնում 30-50 մարդու: Բնակչությունը ցնցոտիների մեջ է, առանց դեղամիջոցների, այլևս դիմադրելու ուժ չունի և շուտով ամբողջությամբ կոչն-

չանա: Մեկ ամսվա ընթացքում բնաջնջում է սպառնում բոլորին՝ ինքնին լուծելով Հայկական հարցը: Թուրքերը կարծում են, որ իրենց կայսրության կործանման համար մենք պետք է պատասխանատվություն կրենք: Բառեր չկան նկարագրելու սարսափելի իրավիճակը: Մեզ փրկելու հարցում դուք կարող եք ուշանալ»[9]:

Մեկ այլ հեռագիր, որը թվագրված էր սեպտեմբերի 26-ով և ստացվել էր Փարիզում ամերիկյան առաքելությունից, տեղեկացնում էր, որ տվյալ պահին հայկական ուժերը կազմված էին մոտավորապես 10.000 վատ հանդերձավորված և զինված մարդուց: Նրանց դեմ էին շարժվում թուրքական 40.000-ոց զորքը և դեպի Երևան առաջացող զգալի թաթարական ուժեր: Թաթարներին առաջնորդում էին թուրք սպաները: Հեռագրում նշվում էր, որ հակառակորդի զորքերը բազմապատիկ գերազանցում էին հայկական ուժերին, և կասկած չկա, որ հայերը կջախջախվեն, եթե մոտ ապագայում օգնություն չստանան թե՛ զորքով և թե՛ ռազմամթերքով: Ելնելով այն փաստից, որ Թուրքահայաստանի բնակչության մեծ մասը գաղթել էր և այժմ գտնվում էր Ռուսահայաստանում, թուրքերի և թաթարների կողմից Ռուսահայաստանի գրավելը կարող էր հանգեցնել հայ ազգի ոչնչացմանը[10]:

Ըստ Ֆիլիպսի՝ պետդեպարտամենտն այդ կապակցությամբ մարդասիրական դիրքորոշում էր հանդես բերել և հստակ հայտարարություններ էր արել ֆրանսիացիներին ու բրիտանացիներին՝ պնդելով, վերջիններս թուրքական իշխանություններին նախազգուշացումներ փոխանցեն՝ Ռուսահայաստանը գրավելու նկրտումներից հետ պահելու նպատակով:

Ֆիլիպսն իր զեկուցման ավարտին հանձնաժողովի անդամներին հավաստիացրեց, որ խնդրի վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկություն, հատկապես գեներալ Հարբորդից նորություն ստանալու դեպքում, ինչը շատ կարևոր էր, անպայման կներկայացնի ենթահանձնաժողովին:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ, թեպետև ԱՄՆ-ի պետական գործիչների մեծամասնությունը շահագրգռված չէր օգնելու հայությանը, Վ. Ֆիլիպսը, հանդես գալով որպես պետդեպարտամենտի ներկայացուցիչ, պնդում էր, որ հայերին օգնություն հատկացնելը, այն է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից Հայաստան զորք ուղարկելն ու կոտորածները կանխելը, պարզապես անհրաժեշտություն է:

Ենթահանձաժողովի լսումների ընթացքում մոտ երկու տասնյակ ելույթ ունեցողներ (և՛ հայ, և՛ ամերիկացի), լուրջ փաստարկներ բերելով, ընդգծում էին շտապ և որոշիչ գործողությունների անհրաժեշտությունը և ԱՄՆ-ի կառավարությանը, ի դեմս ենթահանձնաժողովի ներկայացուցիչների, հորդորում գործել առանց հապաղելու: Սակայն ենթահանձնաժողովը, սենատոր Հարդինգի ղեկա-

---

[9] *Նույն տեղում, էջ 39:*

[10] *Նույն տեղում, էջ 3:*

վարությամբ, ամենևին չէր պատրաստվում որևէ շտապ որոշում կայացնելու և գործնական քայլեր իրականացնելու, չնայած այն բանին, որ Հարդինգը լսումների ավարտի հաջորդ օրը (11. X.1919 թ.) իրազեկել էր, որ խոստանում է շաբաթվա ընթացքում որոշակի քայլեր կատարել: Այդուամենայնիվ, ամիսներ շարունակ նա ձգձգեց իր եզրակացությունները և առաջարկությունները Արտաքին հարաբերությունների հանձնաժողովին ներկայացնելը և զբաղվեց առաջիկա նախագահական ընտրություններին նախապատրաստվելով: Ի վերջո, 1920 թ. մայիսին Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը մերժեց սենատոր Վիլյամսի առաջադրած՝ հայերին օգնելու համար Հայաստանի Հանրապետություն զորք ու զինամթերք ուղարկելու բանաձևը:

СИТУАЦИЯ В АРМЕНИИ ПО ДАННЫМ ПОМОЩНИКА ГОССЕКРЕТАРЯ США ВИЛЬЯМА ФИЛЛИПСА (сентябрь 1919 г.)

ГАМБАРЯН А. В.

Резюме

В сентябре 1919 г. американскому Сенату была представлена резолюция по поводу предоставления правительству Штатов права ввода войск в Армению и оказания необходимой помощи армянам.

В связи с этой резолюцией в подкомитете комитета по иностранным делам Сената США состоялись слушания, на которых выступил помощник госсекретаря Вильям Филлипс. Ознакомив с реальной ситуацией в Армении, Филлипс указал на необходимость незамедлительных действий, ибо промедление грозило опасностью истребления армянского народа.

THE SITUATION IN ARMENIA ON THE STATEMENT OF WILLIAM PHILLIPS, THE ASSISTANT SECRETARY OF STATE OF THE USA (September, 1919)

A. GHAMBARYAN

Abstract

In September, 1919 the Resolution on the critical situation in Armenia was presented in the Senate of the USA. The USA government could be authorized to send the troops to Armenia and help Armenians on the basis of that Resolution.

Hearings on that Resolution took place before the Subcommittee of the Committee on the Foreign Relations of the United Sates Senate. The statement of W. Phillips, the Assistant Secretary of State, was introduced during Hearings. W. Phillips mentioned the necessity of sending forces to Armenia and pointed that delaying of aid could bring to absolute extermination of Armenians.